ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ –
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

**Հայաստանի Հանրապետություն** **12 հունիս, 2024թ.**

**Վարկի համարը՝** P150327 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)

**Առաջադրանքի անվանում՝** **ՀՀ Կոտայքի մարզի /Գառնի համայնք/ Գառնի գյուղի «ՋիԲիէյջ ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում» ենթածրագրի շինարարական աշխատանքների կատարման ընթացքում**

**Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝** **TUR-PPI-03**

**Վերջնաժամկետ՝ 2024թ. հունիսի 12-ը**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») վարկ է ստացել Համաշխարհային Բանկից «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» ֆինանսավորման նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների իրականացման համար:

**Առաջադրանքի նպատակը**. Ակնկալվում է, որ Ծրագրի գործունեության արդյունքում կշահեն մասնավորապես Հայաստանի Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք և Լոռի մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Ակնկալվում է, որ վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավման առումով:

ՏՏԵԶ Ծրագրի միջոցների մի մասը կօգտագործվի **ենթածրագրերի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման համար:**

**Խորհրդատուն պետք է՝**

Խորհրդատուն պետք է իրականացնի տեխնիկական հսկողություն՝

**Առաջադրանքի անվանում՝**

**շինարարության ընթացքում տեխնիկական հսկողության իրականացում՝**

**ՀՀ Կոտայքի մարզի /Գառնի համայնք/ Գառնի գյուղի «ՋիԲիէյջ ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում»:**

**Խորհրդատուի հետ կկնքվի ժամանակի վրա հիմնված պայմանագիր:** Պայմանագրի ստորագրման նախատեսվող ժամկետն է **հունիս/հուլիս, 2024թ.:**

**Ծառայությունները կմատուցվեն շինարարական ծրագրի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև շինարարական աշխատանքների ավարտը՝ նախատեսվում է**

**ՀՀ Կոտայքի մարզի /Գառնի համայնք/ Գառնի գյուղի «ՋիԲիէյջ ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում»՝ 120 օր:**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Պատվիրատու) նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկատվություն (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, կազմակերպության փորձառությունը հավաստող նախկինում կատարած աշխատանքների ցանկը, և պայմանագիր շնորհելու դեպքում նաև համապատասխան բնագավառի շինարարական աշխատանքների որակի

տեխնիկական հսկողության լիցենզիա և լիցենզիային կից ներդիրներ՝ **տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ ոլորտներում,** որը ցույց կտա, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

***Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշներն են.***

***1. Կազմակերպության ընդհանուր փորձառությունը՝ վերջին 5 տարիների ընթացքում ճանապարհների, փողոցների կառուցման և/կամ վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման պատշաճ ավարտված պայմանագրեր-30 միավոր,***
***2. Կազմակերպության հատուկ փորձառությունը՝ վերջին 5 տարիների ընթացքում հասարակական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման պատշաճ ավարտված պայմանագրեր-70 միավոր:***

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ.», 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ.» 3.7 կետում սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» ընթացակարգին համաձայն:
Շահագրգիռ խորհրդատուները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժ. 09:00-ից մինչև ժ.18:00-ը:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան **2024թ. հունիսի 12-ը, ժամը 17:00-ը:**
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Գնումների բաժին
Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 407 սենյակ
Էլ-փոստ՝ procurement.atdf@gmail.com
Հեռ: (+37460) 50 15 60